ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՌ-ՄԱԾՁԲ-26/21

ք. Երևան «___» հունվար 2026 թ.

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ-ն», ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Քոլոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, ԱՅՊՈՍ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Գաբրիելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:1 Սույն պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2026թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կատարողը մատուցում է Պատվիրատուի կողմից շահագործվող SUNMI P2 մոդելի ՀԴՄ-ի սպասարկման ծառայություններ: Սույն պայմանագրի շրջանակներում սպասարկվող ՀԴՄ-ների քանակը որոշվում է Պետական եկամուտների կոմիտեում ակտիվացված և Պատվիրատուի կողմից շահագործվող SUNMI P2 մոդելի ՀԴՄ-ների քանակով: Յուրաքանչյուր ՀԴՄ-ի մասով սպասարկման ծառայությունների մեկնարկը սկսում է Պետական եկամուտների կոմիտեում այդ ՀԴՄ սարքի ակտիվացման օրվանից, իսկ ՀԴՄ-ի մասով սպասարկման ծառայությունները դադարում են Պետական եկամուտների կոմիտեում այդ սարքի գործողության ապաակտիվացման (գրանցումից հանելու) օրը: Պայմանագրի կնքման պահին Պատվիրատուի կողմից շահագործվող ՀԴՄ-ների քանակը պայմանագրի կնքման պահին կարող է արձանագրվել Պայմանագրին կից ստորագրվող շահագործման ակտով:

1.2.1 Կատարողի կողմից ՀԴՄ-ի սպասարկման ծառայությունները բաղկացած են հետևյալ գործառույթներից.

1.2.2 ՀԴՄ-ների ցանցին միացումը, ՀԴՄ-ի աշխատանքի ստուգումը և դրա գործարկումը.

1.2.3 ՀԴՄ-ների միջոցով կատարված դրամական հաշվարկների վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմին ցանցային կապի միջոցներով ուղարկումը և պլաստիկ քարտերով հաշվարկների կատարումն ապահովելու համար կապի ապահովումը՝ շարժական կամ ֆիքսված հեռախոսակապի օպերատորի միջոցով.

1.2.4 ՀԴՄ-ների ընթացիկ սպասարկումը .

1.2.5 Խափանված ՀԴՄ-ի փոխարեն Պատվիրատուի պահանջով անհատույց ժամանակավոր տրամադրել սպասարկման կենտրոնին պատկանող մեկ այլ ՀԴՄ՝ մինչև խափանված ՀԴՄ-ի վերանորոգումը կամ այլ ՀԴՄ-ձեռքբերումը Պատվիրատուի կողմից, բայց ոչ ավել քան մեկ ամիս ժամանակահատվածով.

1.2.6 Պատվիրատուի կողմից որևէ բանկի հետ կնքված պայմանագրի շրջանակներում ՀԴՄ սարքով վճարային քարտերի միջոցով (չիպային, անհպում և մագնիսական), առկայության դեպքում նաև այլ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքներով անկանխիկ դրամական հաշվարկների իրականացման ծառայությունը (այսուհետ՝ POS ծառայություն) ստանալու դեպքում, ապահովել POS ծառայության համար անհրաժեշտ կապի առկայությունը,

1.2.7Պատվիրատուի պահանջով Կատարողը կարող է մատուցել իր կողմից սովորաբար մատուցվող ՀԴՄ սպասարկման հետ կապված կամ ՀԴՄ-ի հետ կապված այլ ծառայություններ, որոնք նախատեսված չեն սույն Պայմանագրի 1.2. կետով: Այդ դեպքում առանց լրացուցիչ պայմանագիր կնքելու սույն Պայմանագրի հիման վրա Պատվիրատուն կարող է պահանջել, իսկ Կատարողը՝ մատուցել այն ծառայությունները, որոնք Կատարողի պաշտոնական կայքում հրապարակված են կամ Կատարողի Պատվիրատուին ուղղված առաջարկի հիման վրա ներկայացված են որպես Կատարողի կողմից այդ պահին մատուցվող ծառայություններ և սահմանված են դրանց գները:

1.2.8 Պատվիրատուի կողմից իրականացվող տնտեսական գործունեությունը Պայմանագրի կնքման պահին հարկվում է ԱԱՀ-ով: Այս տեղեկությունը Պատվիրատուի կողմից չտրամադրելու կամ սխալ տրամադրելու դեպքում Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.2

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 ՀԴՄ-ն շահագործել արտադրողի կողմից սահմանված տվյալ մոդելի շահագործման կանոնների, ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ «Հսկիչ դրամարկղային մեքենային եվ ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման եվ գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատելու, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնի դուրս գրման կարգը, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների տեխնիկական պահանջները, դրանց հաշվառման, հաշվառումից հանման կարգը, դրանց միջոցով տրամադրվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմաններին ներկայացվող, ինչպես նաեվ ինտերնետային կայքին կամ էլեկտրոնային հավելվածին (էլեկտրոնային առեվտրային հարթակին) ներկայացվող պահանջները, էլեկտրոնային հարթակով ուղեվորափոխադրումների, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման դեպքում կիրառության կանոնները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 3 դեկտեմբերի 2020 թվականի N 1976-Ն որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան (այսուհետ՝Շահագործման կանոններ),

2.2.4 ՀԴՄ-ն շահագործելիս պահպանել կապարակնիքները,

2.2.5 Բացառել ՀԴՄ-ն քանդելը, դրա ապարատային մաս մուտք գործելը, ՀԴՄ-ի աշխատանքային ծրագրում փոփոխություն կատարելը կամ դրանց փորձը,

2.2.6 ՀԴՄ-ն շահագործումից հանելու դեպքում (Պետական եկամուտների կոմիտեում ՀԴՄ-ի ապաակտիվացումը կամ գրանցումից հանումը) առնվազն 10 աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնել Կատարողին: Այս պարտականությունը չկատարելու դեպքում ՀԴՄ-ի սպասարկման դադարեցման մասին ուշ տեղեկանալու և ավել սպասարկման գումար վճարելու ռիսկը կրում է Պատվիրատուն,

2.2.7 ՀԴՄ սարքի վրա POS ծառայություն ակտիվացված լինելու դեպքում, պատշաճ կատարել այդ ծառայության հետ կապված բանկի հետ կնքված պայմանագրի դրույթները,

2.2.8 Սույն պայմանագրով նախատեսված հաղորդակցման եղանակներից որևէ մեկի վերաբերյալ տվյալի փոփոխության դեպքում տեղեկացնել Կատարողին,

2.2.9 Կատարողի կողմից ժամանակավոր օգտագործման համար տրամադրված ՀԴՄ սարքը օգտագործել խնամքով, չիրականացնել որևէ ֆիզիկական միջամտություն սարքին և պահպանել սարքին վիճակում: Այդ ՀԴՄ սարքը փչացնելու կամ վնասելու դեպքում Պատվիրատուն պարտավորվում է փոխհատուցել Կատարողին այդ ՀԴՄ սարքի արժեքը՝ Կատարողի մոտ տվյալ պահին գործող նոր ՀԴՄ սարքի շուկայական գնով,

2.2.10 կատարել սույն պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել չխոչընդոտել Ծառայությունների մատուցմանը.

2.3.3 Ֆորս-մաժորային հանգամանքների առկայության դեպքում դադարեցնել Ծառայությունների մատուցումը .

2.3.4 ՀԴՄ սարքի վրա POS ծառայություն ակտիվացված լինելու դեպքում, բանկի հետ կնքված պայմանագրով նախատեսված Պատվիրատուի կողմից ծառայության վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում, դադարեցնել կամ կասեցնել Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ կապի Ծառայությունների համար վճարի փոխանցումը ցանցային կապի օպերատորին մինչև գումարի վճարումը.

2.3.5 Մշակել, հավաքել, ամրագրել, համակարգել, պահպանել, օգտագործել, փոխանցել Ծառայությունների մատուցման ընթացքում ստացված տվյալները, այդ թվում՝ ՀԴՄ-ի միջոցով կատարված գործարքների տվյալները, կատարել տվյալների հետ կապված ցանկացած այլ գործողություն՝ ՀԴՄ-ների սպասարկման ծառայությունների մատուցման, գործառնական խնդիրների լուծման, համապատասխան տվյալների վերլուծության, սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների հետ ինչպես կապված, այնպես էլ չկապված ցանկացած նպատակով.

2.3.6 Ծառայությունները մատուցել ինչպես իր աշխատող հանդիսացող մասնագետների, այնպես էլ ներգրավված այլ մասնագետների կողմից:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 ՀԴՄ-ն կիրառության մեջ դնելուց առաջ ստուգել դրա աշխատանքը, իրականացնել ՀԴՄ-ների ընթացիկ, այդ թվում՝ ծրագրային սպասարկումը.

2.4.5 Աջակցել Պատվիրատուի ՀԴՄ օգտագործող աշխատակիցներին (ադմինիստրատորներ, գանձապահներ) ՀԴՄ-ի աշխատանքի սկզբունքների և մեթոդների ուսուցման հարցում.

2.4.6 Ապահովել ցանցային կապին վերաբերող՝ հարկային մարմնի տեղեկատվական համակարգի և պրոցեսինգային կենտրոնի գործառույթներ իրականացնող կազմակերպությունների, այդ թվում՝ «ԱրՔա» համակարգի հետ աշխատանքի համար անհրաժեշտ տվյալների (SIM քարտի համար, ֆիքսված հեռախոսահամար, IP հասցե և այլն) հարկային մարմին և «ԱրՔա» համակարգին տրամադրումը.

2.4.7 ՀԴՄ-ի անսարքությունը վերացնելուց հետո Կատարողի մեղքով առաջացած թերությունները ողջամիտ ժամկետում վերացնել Կատարողի հաշվին՝ առանց լրացուցիչ վարձավճարի.

2.4.8 ՀԴՄ-ի նորոգման աշխատանքների ժամանակահատվածի համար Պատվիրատուի դիմելու դեպքում ժամանակավորապես Պատվիրատուին անհատույց տրամադրել ՀԴՄ, բայց ոչ ավել քան մեկ ամիս ժամկետով.

2.4.9 Մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը Պատվիրատուին ներկայացնել մատուցած Ծառայությունների հաշիվ-ապրանքագիրը (հարկային հաշիվ):

2.4.10 ՀԴՄ սարքի վրա POS ծառայություն ակտիվացված լինելու դեպքում, ապահովել անհրաժեշտ կապ POS ծառայությունների իրականացման համար:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[3]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը

[3],

տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **43200** (քառասուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի -30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:4

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:5 Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:6

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

5.8 Եթե օրենսդրության փոփոխության արդյունքում մատուցված Ծառայությունները չեն համապատասխանում դրանց փոփոխված տարբերակին, ապա Կատարողը պատասխանատվություն չի կրում, եթե օրենսդրական փոփոխությունները ուժի մեջ են մտել Ծառայությունները մատուցելուց հետո:

5.9 ՀԴՄ-ների անսարքությունները և աշխատանքի խափանումները, որոնք առաջացել են Շահագործման կանոնները Պատվիրատուի կողմից խախտելու դեպքում, կարող են վերացվել Կատարողի կողմից Պատվիրատուի հաշվին:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը7:

7.13 Կատարողը Պատվիրատուին սույն պայմանագրից բխող հարաբերությունների հետ կապված ծանուցումները իրականացնում է հետևյալ եղանակներից որևէ մեկով կամ մի քանիսով միասին.

7.14. Պատվիրատուի հեռախոսահամարին SMS հաղորդագրություն ուղարկելու միջոցով

7.15 Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեին հաղորդագրություն ուղարկելու միջոցով,

7.16 Պատվիրատուի կողմից շահագործվող ՀԴՄ-ի էկրանին հաղորդագրություն ուղարկելու միջոցով,

7.17 փոստային առաքմամբ:

7.18 Պատվիրատուն Կատարողին սույն պայմանագրից բխող հարաբերությունների հետ կապված ծանուցումները իրականացնում է հետևյալ եղանակներից որևէ մեկով կամ մի քանիսով միասին.

7.19 Կատարողի էլեկտրոնային փոստի հասցեին հաղորդագրություն ուղարկելու միջոցով,

7.20 փոստային առաքմամբ:

7.21 Սույն պայմանագրի 7.13 և 7.18 կետերով նախատեսված ծանուցումները համարվում են պատշաճ, այդ ձևով ծանուցումը ուղարկելուց հետո հաջորդ օրը, եթե հեռախոսահամարին SMS հաղորդագրություն ուղարկելու, էլեկտրոնային փոստի հասցեին հաղորդագրություն ուղարկելու կամ Պատվիրատուի կողմից շահագործվող ՀԴՄ-ի էկրանին հաղորդագրություն ուղարկելու ձևով ծանուցումների դեպքում չի եկել հաղորդագրություն այդ ծանուցումները չհասնելու վերաբերյալ: Փոստային ծանուցման դեպքում կողմը համարվում է պատշաճ ծանուցված համապատասխան անձին հանձնելու օրը:

7.22 Կատարողի պաշտոնական ինտերնետային կայքի հասցեն է www.ipos.am իսկ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն՝ info@ipos.am: Պատվիրատուի և Կատարողի պաշտոնական վավերապայմաններ են համարվում

սույն պայմանագրի 8-րդ կետում ամրագրված վավերապայմանները և դրանցով ներկայացված բոլոր հաղորդակցությունները, այդ թվում ծանուցումները համարվում են պատշաճ ծանուցում: Սույն Պայմանագրի 8-րդ կետով նախատեսված որևէ վավերապայմանի կամ սույն Պայմանագրում նախատեսված անհատականացման այլ տվյալի փոփոխության մասին կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել մյուս կողմին, հակառակ պայմաններում կողմը կարող է հիմք ընդունել առկա վավերապայմանները և տվյալները

7.23 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.24 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.25 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ ՀՎՀՀ 01541435 ք. Երևան, Ալեք մանուկյան 5 Այ Դի Բանկ ՓԲԸ h/h 11817087695700 Գործադիր տնօրեն Ա. Քոլոյան	Այպոս ՍՊԸ ՀՎՀՀ 02832523 ք. Երևան , Խորենացի 28 Ակբա Բանկ ՓԲԸ h/h 220410516912000 Տնօրեն՝ Ա. Գաբրիելյան
----------	----------
/ստորագրություն/ Ստորագրող ԱՐՄԵՆ ՔՈԼՈՅԱՆ 3803570387	/ստորագրություն/ Կ.Տ Ստորագրող ԱՐՄԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ 1912780143
2026-01-22 19:45:58 GMT+04:00 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից	2026-01-22 13:40:59 GMT+04:00 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված N 1
« » հունվարի 2026 թ. կնքված
ՀՀՌ-ՄԱԾՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50311300/1	1 հատ SUMMI P2 մակնիշի հսկիչ-դրամարկղային մեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություն	դրամ	43200	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 5	31.12.2026թ

** Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի հանրային
ռադիոընկերություն ՓԲԸ
ՀՎՀՀ 01541435
ք. Երևան, Ալեք մանուկյան 5
Այ Դի Բանկ ՓԲԸ
h/h 11817087695700
Գործադիր տնօրեն Ա. Քոլոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Այպոս ՍՊԸ
ՀՎՀՀ 02832523
ք. Երևան , Խորենացի 28
Ակբա Բանկ ՓԲԸ
h/h 220410516912000
Տնօրեն՝ Ա. Գաբրիելյան

/ստորագրություն/
Կ.Տ
Ստորագրող
ԱՐՄԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
1912780143

2026-01-22 13:41:31 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված N 2
« » հունվար 2026 թ. կնքված
ՀՀՌ-ՄԱԾՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311300/1	հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման	0	3600	7200	10800	14400	18000	21600	25200	28800	32400	36000	43200	43200

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի հանրային
ռադիոընկերություն ՓԲԸ
ՀՎՀՀ 01541435
ք. Երևան, Ալեք մանուկյան 5
Այ Դի Բանկ ՓԲԸ
h/h 11817087695700
Գործադիր տնօրեն Ա. Քոլոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Այպոս ՍՊԸ
ՀՎՀՀ 02832523
ք. Երևան , Խորենացի 28
Ակբա Բանկ ՓԲԸ
h/h 220410516912000
Տնօրեն՝ Ա. Գաբրիելյան

/ստորագրություն/
Կ.Տ
Ստորագրող
ԱՐՄԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
1912780143

2026-01-22 13:42:03 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն